

քով նստաւ և ըսաւ. «Իշխա՛նդ իմ, ի՞նչ պէս ես: Զաւակդ քեզի բերի»: Ասադոր աչքերը բացաւ և գոչեց. «Ո՞ւր է զաւակս: Կ'ուզեմ զինքը տեսնել ու յետոյ խոյամուծիւն ընդունիլ»: Թագֆուր հօրը քով փութաց և անոր ոտքերն ինկաւ: Զաւակին դէմքը տեսնելուն պէս՝ մատը բարձրացուց և մահմետական եղաւ»: Թագֆուր յետոյ մանրամասնօրէն կը պատմէ Սեյլիտի սրբազործութիւններն ու քաջասրտութիւնը: Կայրը եօթը օր ալ ապրելէ ետք կը մեռնի. Սեյլիտ իր ձեռքովը կը թաղէ զայն: Եօթը օր Սեյլիտ Ասադորի մահը կուլայ: Ութը օրը անոր տեղ կայր կը գնէ Թագֆուրը: Յետոյ, բանակներուն հրամանատարները կուգան և իրենց ծառայութեան հարկը կը մատուցանեն»:

Պատմական տեսակէտով ոչինչ կարելի է քաղել այս հրաշագատութիւնէն, որոնցմով լեցուն են Սեյլիտ Պաթթալի հինգերորդ և միւս գիրքերը: Բայց Ասադորի կայսերական ասպարէզին սկիզբն ու վախճանը, իր զինակցութիւնը մահմետականներուն հետ, հարկը՝ զոր խոստացած էր վճարել, և մանաւանդ իր անունը, թոյլ կուտան մեզի ըսել, թէ Սաչատուր և Ասադոր նոյն անձն են: Եւ այս նոյնացման շնորհիւ, «յետ-Մանդկերտեան» կայսրերուն յաջորդութիւնը, այն ազատութիւններով՝ զորս պէտք է ներելի նկատել պատմական վէպի մը համար, և որ կը գտնուի Սեյլիտ Պաթթալի վերջին մասին մէջ, թուականի մը նշանակութիւնը ունի այս զարմանալի վէպին խմբագրութեանը ժամանակը ճշգրտու տեսակէտով:

Յաւելուածական ծանօթութիւն. — Պ. Մարիուս Գանառ կը գրէ թէ «Ասադոր» յիշուած է Տաթ-ուլ-Հիմմայի մէջ ալ, որ արարական նախատիպարն է Սեյլիտ Պաթթալի: Ասադոր, Տաթ-ուլ-Հիմմայի մէջ «Տուքասներուն թագաւորն» է, և այս շփոթութիւնը կը հաստատէ մեր նոյնացումը, վասնզի Ասադոր եթէ Doukas-Տուկիթ մը չէ, doukas-գուքս մըն է, Անտիոքի գուքսը(\*):

HENRI GREGOIRE Թրգմ.  
Բարիկ ՀԱՅԿ ՊԵՐՊԷՐԵԱՆ

**ԿՐՕՆԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ**

**ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ ՄԸ  
ՄԱՂԱՔԻԱՅԻ ԳՐԲԻՆ ՇՈՒՐՁ**

12) Ան որ, այսպէս կը գործէ, թող ենոզան հեռայնէ Յակորի վրաններէն, ան որ կը հսկէ և կը պատասխանէ, և ան որ ընծայ կը մատուցանէ բանակներու ենոզալին:

Խնդրոյ առարկայ եղող անհասը, իր պարագաներով, պիտի պատժուի: וְעַתָּה וְעַתָּה «և իր որդին, և իր որդւոյն որդին»: Վուլ. ունի magistrum et discipulum. իսկ LXX էօճ քալ տաբւանի նոյնպէս Զօհ. մինչև նկուն լիցի:

13) Եւ այս նորէն կ'ընէք: Ենոզայի խորանը արցունքով կը ծածկէք, լալով և հեծեծանքով, որովհետև ան կը մերժէ հակիլ դէպի ընծան, և ընդունիլ հաճիլ ընծայ մը ձեր ձեռքէն:

Աղապատանք և զղջում, զուգընթացաբար մեղքերու ճահիճին մէջ, մխրճուող ապականութեան մը հետ, չին ընծայիք երբեք երաշխիքը դրական արդիւնքի մը: וְעַתָּה וְעַתָּה וְעַתָּה LXX ունի քալ տաբւ, քալ էրիսսու, էթօլէտէ, այսինքն וְעַתָּה וְעַתָּה וְעַתָּה որ աւելի ուղիղ կը թուի: Ակ. Սի. Թէ. կը վերարտադրեն Երբայական բնագիրը: Ակ. քալ տաբւ Դեւտերոն էթօլէտէ. Սի. քալ տաբւ Դեւտերոն էթօլէտէ. Թէ. քալ տաբւ Դեւտերոն էթօլիսսաւ: וְעַתָּה וְעַתָּה յետոյ, Ղպ. և Զօհր. «ձեր» ունին: וְעַתָּה երկրորդ, Արար. ՆՅ, Ասոր. և և, Աքքատ. sanu: כֹּסֶם ծածկել, Ասոր. և և, Արար. և հազնիլ: וְעַתָּה արցունք, Արար. և և, כֹּסֶם լալ, Արար. և և, Աքքատ. baku:

14) Եւ կ'ըսէք: Ինչօ՞ւ. — որովհետև ենոզան վկայից քու և երխտասարգութեանդ կնոջ միջև, որուն դէմ դուն նենգեցիր, թէև ան եղաւ կենակիցդ և ուխտիդ կինը: Ամուսնական կեանքի խախտւած հիմը՝ որ անմիջականօրէն կ'առաջնորդէ բազմա-

(\*) Byzantion հանդէսին (XVI, 2, էջ 529), փրօֆ. Ա. Կրեկուար կը գրէ թէ Ասադորի նոյնացումը Թաչատուրի հետ ամենուն կողմէ ընդունուած է: — Հ. Պ.:



հովան է. իր անագնագղորդ գալուստով, պիտի փարատէ տիրող թիւրիմացութիւնները, կանխուած իր նախակարգապետով, որ պիտի պատրաստէ ուղին ապագայ իրականութեան: **יה** Արար. **ان, هن, ملاأכי**, հրեշտակս կամ պատգամաբերս, այս բան է, զոր խմբագրիչ կամ հրատարակիչ մը, նոյնացուցած է մարգարէութեան հեղինակին հետ: **היכל** տաճար, Արար. **היכל, Ասոր. אכל**, Եթովպ. **haekale**. ոչ-սեմական, այլ սումերական է այս բառին ծագումը, սումերերէն **é**, տուն կը նշանակէ, իսկ **gal**, մեծ, ուրեմն **é-gal** կը նշանակէ մեծ տուն, տաճար, որ աքքատերէնով կը սեմականայ **ekallu** ձևին տակ:

2) Եւ ո՞վ պիտի կրնայ տոկալ իր գալըստեան օրը, և ո՞վ պիտի կրնայ մնալ երբ ան երևի. որովհետև ան պիտի ըլլայ ձուլիչի կրակին՝ և լուացարարներու բողոսին պէս:

Երկու սկզբունքներ, պիտի հետապնդէ Տիրոջ ատեանը: — Վճիռ և գտում: Փորձութեան բովերէն անցներով, պիտի յայտնաբերեն անոնք, ինչ որ կայ իրենց մէջ վսեմ, ազնուական, տեսական, աստուածագրոջմ: **הוא כי վերջ, LXX** **κ'αυτελεγνէ** **επισπορευεται**. **המצר LXX** **χωνευτεριου** նոյնպէս **Ջօհ**. Հալոցի: **עמד** Աքքա. **emedu**, **ראה** Արար. **רא** Ասոր. **ראה**. Աքքա. **isatu**, Եթովպ. **hesate**: **ברית LXX** **ποια**, Ակ. **βωρίθ** Ասորա-վեցիչեան **כח**. բուսական աղ, աղային կամ **alkaline** տեսակի զանազան տունկերու մոխիրէն գոյացած. Արար. **أشنان, أشان, قلى, Salsola Kali** Linn. հիւները կը գործածէին գաշն իւզով միասին, մաքրելու համար զգետները օճառի փոխարէն, Երեմ. II, 22, նաև մետաղները գտելու Մաղ. III, 2: A Hebrew and English Lexicon of the Old Testament, Edward Robinson, Boston, 1881, էջ 159:

3) Եւ պիտի նստի ան, ձուլելով և մաքրելով արծաթը, և պիտի մաքրէ Ղևիի որդիները, և պիտի զտէ զանոնք ոսկիի և արծաթի պէս, և պիտի ըլլան Եհովայի համար, անոնք որ ընծայ կը մատուցանեն արդարութեամբ:

Անհրաժեշտ է որ նախապէս Ղևիները՝ այսինքն քահանայական դասը ներքնապէս բարեշրջուին, թօթափեն իրենց ապակա-

նութիւնները, ըլլան լուսարձակը շինիչ սկզբունքներու, խաւարացած հողիները լուսաւորող. Ղևիի որդիները իբրև քահանայ ներկայացնելը, Երկրորդումն Օրինացի յատուկ հասկացողութիւն մըն է: **קק LXX** **χρει** Վուլ. **colabit**, Ասոր. **כע** «զանոնք պիտի ընտրէ». **קכ** արծաթ, զրամ, Աքքա. **kaspu**, որուն սումերերէն նախատիպն է **kù**: **כה** Արար. **כה**, Ասոր. **כח**, ոսկի: **קדצ**, արդար ըլլալ, ուղիղ. Արար. **صدق**. Ասոր. **صق**. Աքքա. **saduq** «իրաւունք»:

4) Եւ Յուդայի և Երուսաղէմի ընծան հաճելի պիտի ըլլան Եհովային, ինչպէս հին օրերուն, և նախկին տարիներուն:

Անցեալի փառքի ոսկի օրերը անգամ մը ևս պիտի առնեն յարութիւն. ակնարկուած շրջանը անորոշ է, Մովսիսական, Դաւիթեան, թէ Մողոմոնեան: Ուշագրաւ է, տակաւ առ տակաւ ստեղծուող համակրանքի կապը: **קדמני**, նախկին, ատենով (**autrefois**) **קדמ** բայարմատէն որ կը նըշանակէ կանխել, ընդառաջել. Արար. **קדמ**, Ասոր. **קד**, Եթով. **qadama**. Աքքա. **qudmu**:

5) Եւ պիտի մօտենամ ձեզի դատելու համար, և պիտի ըլլամ արագահաս վկայ մը, կախարդներու դէմ, և շնացողներուն, և սուտ երգուողներուն, վարձկանին թռչակը բռնաբարողներուն, այրիին, որրին, և անոնց որոնք կը շեղեցնեն օտարը, և շին վախնար ինձմէ, կ'ըսէ բանակներու Եհովան:

Ամբողջ ժողովուրդի մը հաւասարապէս կ'ուզուի, զարծի այս կողմ, զէպի առողջ բարոյականի մը ըմբռնումին: Ահաւասիկ այս պարբերութիւնը կը բնորոշէ շատ յըստակօրէն մարգարէին խառնուածքը: Ան տառացիին բուրմը չէ, մակերեսային և անփոյթ, այլ, խորքի, արժէքի, հոգեկանի պարզաբանման և իրականացման ջերմ ուխտեալ մը, կրօնքի ընկերային վսեմ բարոյականի գործնական կիրարկման համար, տքնող և պայքարող, շքեղ առաքեալ մը:

**שכר**. **בשמי** **משגועים** **למנה** **LXX** **κ'αυτελεγνէ** **שכר** կը նկատենք կրկնաբանութիւն մը: **אלמנה LXX** **καί τούς καταδυναστεύοντας χήραν**. նոյնպէս **Ջօհ**, և որ յաղթահարեն զայրիս: **ויתום LXX** **καί τούς κωνδύλιζοντας ἑρπεανούς** նոյնպէս **Ջօհ**. և կուփեն զորրս: **גג LXX**

